ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵՔ-ԲՄԽԱՇՁԲ-21/19

ք. Երևան -06- օգոստոսի 2021թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Արխի Թուլս» ՍՊԸ**-ն, ի դեմս տնօրեն Է. Խաչատրյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Թվով 12 հետիոտնային անցումները՝ «Հետիոտնային կանչի» ռեժիմով աշխատող լուսացուցային համակարգով կահավորելու նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական** աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ նախագծողը՝

1) շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը կազմում է օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնում է կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնում է աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային ժամանակացույցը,

4) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնում է հայերեն և ռուսերեն լեզուներով՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի լրամշակման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքըկամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է **390000 (երեք հարյուր իննսուն հազար)** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի **0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական)** տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի **0,05 (զրո ամբողջ զրո հինգ հարյուրերորդական)** տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ(ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ 'համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսան ապայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարմանժամկետըկարողէերկարաձգվելմեկանգամմինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:7.12 Պայմանագրիկապակցությամբծագածվեճերըլուծվումենբանակցություններիմիջոցով:Համաձայնություն ձեռքչբերելուդեպքումվեճերըլուծվումեն ՀՀ դատարաններում:

7.10 Պայմանագիրը կազմված է ----//--------- էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.11 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.12 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչությունը:

8.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Երևանի քաղաքապետարան	«ԱՐԽԻ ԹՈՒԼՍ » ՍՊԸ
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1	Հասցե՝ ՀՀ Արարատի մարզ գ. Ոստան,
Կենտրոնական գանձապետարան	Երևանյան 13
Հ/Հ 900012410032	Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 02593108	ՀՀ 1150015516686660
	ՀՎՀՀ 04234306
Է. Կիրակոսյան-----------	Է. Խաչատրյան-----------
Կ.Տ	Կ.Տ.

Հավելված N 1
--06--օգոստոսի 2021 թ. կնքված
ԵՔ-ԲՄԽՍՇՁԲ-21/19 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/Հ	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Տեխնիկական բնութագիրը	Հ/Մ	Միավոր գինը	ընդհանուր գինը	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	ժամկետը
1	71241200/203	Երևան քաղաքի փողոցների խաչմերուկների լուսացուցայի օբյեկտների կառուցման շին. Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները կատարելիս. 1. Նախատեսել. • Հենասյուները՝ ՀՀ գործող նորմերին համապատասխան, անցումային դետալներով, հիմքի կոնստրուկցիայով • Լուսացույցերը՝լուսադիոդային 2. Ներկայացնել մանրամասնորեն կատարված ուսումնասիրությունների և չափագրումների արդյունքում հիմնավորված աշխատանքային ծավալներ: 3. Նախագիծը մշակել գործող նորմերի պահանջներին համաձայն: 4.Ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները: 5.Ներկայացնել աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիային, տեխնիկական միջոցներին, աշխատանքային ռեսուրսներին և մասնագիտական հատկանիշներին ներկայացվող պահանջները, օրացուցային գրաֆիկ: 6. Սահմանված կարգով. / իրականացնել նախագծի քաղաքաշինական փորձաքննություն կամ տալ համապատասխան երաշխավորագիր/:	դրամ	390000	390000	1	ք.Երևան	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 45-րդ օրացույցային օրը ներառյալ

		7.Նախագիծը ներկայացնել 7 օրինակից և էլեկտրոնային կրիչով: Աշխատանքների ավարտ՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 45-րդ օրացուցային օրը ներառյալ: 8. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը կազմել յուրաքանչյուր օբյեկտի համար առանձին տարբերակով: 9. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը ներկայացնել նաև ռուսերեն տարբերակով: 10. Նախագծը ենթակա է համաձայնեցման ներքոհիշյալ կազմակերպությունների հետ. 1) «ՀԷՑ» ՓԲԸ 2) «ՎԵՈՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ 3) «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ 4) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Երևանի ԳԳՄ 5) «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ 6) «Երքաղլույս» ՓԲԸ 7) ԷԷ ՀՕ «ՀԱՅԷՆԵՐԳՈԿԱՊ» ՓԲԸ 8) ՀՀ Ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայություն 9) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ՃՔ վարչություն: 11. Աշխատանքների վճարումը կիրականացվի փորձաքննության դրական եզրակացությունը ստանալուց հետո: 1. Եղվարդի խճուղի (Վան թաղամաս) 2. Եղվարդի խճուղի (Ձոր 1 թաղամաս) 3. Տ.Պետրոսյան փողոցում հ.հ.38-5/1 հասցեների հարևանությամբ 4. Տ.Պետրոսյան փողոցում հ.47/2 հասցեի հարևանությամբ (հ.20 պոլիկլինիկա) 5. Թոթովենցի փողոցում հ.9/12 հասցեի հարևանությամբ (հ.164 դպրոցի մոտ) 6. Ռուբինյանց փողոցում (Ալմաստ գործարանի մոտ) 7. Դ.Անհաղթի փողոցում հ.10 հասցեի հարևանությամբ 8. Արշակունյաց պողոտա հ.89 հասցեի հարևանությամբ (Ռազմական ավիացիա) 9. Դ.Բեկի փողոց հ.65/2 հասցեի հարևանությամբ 10. Ռաֆֆու փողոց (Եկեղեցու հարևանությամբ)						

		11. Բագրատունյաց հ.51 հասցեի հարևանությամբ 12. Բաշինջաղյան 188 հասցեի հարևանությամբ:						

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ
Երևան քաղաքի թվով 12 չկարգավորվող հետիոտնային անցումները «Հետիոտնային կանչի» ռեժիմով աշխատող լուսացուցային համակարգով կահավորելու նպատակով մշակել նշված համակարգերի տեղադրման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը՝ ըստ ներքոհիշյալ տեղադրման վայրերի. 1. Եղվարդի խճուղի (Վան թաղամաս) 2. Եղվարդի խճուղի (Ձոր 1 թաղամաս) 3. Տ.Պետրոսյան փողոցում հ.հ.38-5/1 հասցեների հարևանությամբ 4. Տ.Պետրոսյան փողոցում հ.47/2 հասցեի հարևանությամբ (հ.20 պոլիկլինիկա) 5. Թոթովենցի փողոցում հ.9/12 հասցեի հարևանությամբ (հ.164 դպրոցի մոտ) 6. Ռուբինյանց փողոցում (Ալմաստ գործարանի մոտ) 7. Դ.Անհաղթի փողոցում հ.10 հասցեի հարևանությամբ 8. Արշակունյաց պողոտա հ.89 հասցեի հարևանությամբ (Ռազմական ավիացիա) 9. Դ.Բեկի փողոց հ.65/2 հասցեի հարևանությամբ 10. Ռաֆֆու փողոց (Եկեղեցու հարևանությամբ) 11. Բագրատունյաց հ.51 հասցեի հարևանությամբ 12. Բաշինջաղյան 188 հասցեի հարևանությամբ:	Երևան քաղաքի փողոցների խաչմերուկների լուսացուցայի օբյեկտներիի կառուցման շին. աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքները կատարելիս. Նախատեսել. Հենասյուները՝ ՀՀ գործող նորմերին համապատասխան, անցումային դետալներով, հիմքի կոնստրուկցիայով Լուսացույցերը՝ լուսադիոդային 2. Ներկայացնել մանրամասնորեն կատարված ուսումնասիրությունների և չափագրումների արդյունքում հիմնավորված աշխատանքային ծավալներ: 3. Նախագիծը մշակել գործող նորմերի պահանջներին համաձայն; 4.Ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները: 5.Ներկայացնել աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիային, տեխնիկական միջոցներին, աշխատանքային ռեսուրսներին և մասնագիտական հատկանիշներին ներկայացվող պահանջները, օրացուցային գրաֆիկ: 6. Սահմանված կարգով. / իրականացնել նախագծի քաղաքաշինական փորձաքննություն կամ տալ համապատասխան երաշխավորագիր/: 7.Նախագիծը ներկայացնել 7 օրինակիցև

	էլեկտրոնային կրիչով: Աշխատանքների ավարտ՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 45-րդ օրացուցային օրը ներառյալ: 8. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը կազմել յուրաքանչյուր օբյեկտի համար առանձին տարբերակով: 9. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը ներկայացնել նաև ռուսերեն տարբերակով: 10. Աշխատանքների վճարումը կիրականացվի փորձաքննության դրական եզրակացությունը ստանալուց հետո:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012410032
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ԱՐԽԻ ԹՈՒԼՍ » ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ Արարատի մարզ գ. Ոստան,
Երևանյան 13
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ 1150015516686660
ՀՎՀՀ 04234306

Է. Խաչատրյան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
06 -օգոստոսի 2021 թ. կնքված
ԵՔ-ԲՄԽԱՇՁԲ-21/19 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկծածկագիրը՝ ըստԳՄԱդասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200/203	Թվով 12 հետիոտնային անցումները՝ «Հետիոտնային կանչի» ռեժիմով աշխատող լուսացուցային համակարգով կահավորելու նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական աշխատանքներ	-	-	-	-	-	-	-	390000	390000	390000	390000	390000	390000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012410032
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ԱՐԽԻ ԹՈՒԼՍ » ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ Արարատի մարզ գ. Ուստան, Երևանյան 13
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ 1150015516686660
ՀՎՀՀ 04234306

Է. Խաչատրյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
---------- օգոստոսի 2021 թ. կնքված
ԵՔ-ԲՄԽԱՇՁԲ-21/19 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրիկողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելուվայրը _____	գտնվելուվայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻԿԱՄԴՐԱՄԻՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « »20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

ՊայմանագրիշրջանակներումՊայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարվածաշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
---------- օգոստոսի 2021 թ. կնքված
ԵՔ-ԲՄԽԱՇՁԲ-21/19 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ_____-ի(այսուհետ՝ Պատվիրատու) և_____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 48
Հեռախոս՝374 10 592020
Ֆաքս՝
Էլ. փոստ՝

Տպված է՝03/08/2021 16:02 (UTC+04:00□

Բյուջետային փոխանցում N 000044

Ամսաթիվ	**03/08/2021**	Նույնացուցիչ	**23c5447c-220c-4f67-b5d5-6007668ed82e**
Հաշիվ	Շահառուի հաշիվ	Գումար	
1150015516686660	**900008000664**	**AMD**	**39,000.00**
Վճարողի անվանում	**ԱՐԽԻ ԹՈՒԼՍ ՍՊԸ**		
Վճարողի բանկ	**«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ**		
ՀՎՀՀ	**04234306**		
Տարածաշրջանի/ՀՏ կոդ	**91**		
Շահառուի անվանում	**ՀՀ ֆինանսների նախարարություն**		
Գումարը բառերով	**Երեսունինը հազար դրամ**		
Նպատակ	**ԵՔ-ԲՄԽԱՇՁԲ-21/19 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ,«ԱՐԽԻ ԹՈՒԼՍ» ՍՊԸ ՀՎՀՀ 04234306**		

Ստորագրող	Edgar Khachatryan
Ստորագրության կարգ	I, II
Ամսաթիվ	03/08/2021 15:54:30.370
Սարքի անվանում	SMS
Սարքի սերիալ N	37477119180
Ստորագրման տվյալ	SMS
Ստորագրություն	72272

Կատարված է բանկի կո□մից

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 48
Հեռախոս՝374 10 592020
Ֆաքս՝
Էլ. փոստ՝

Տպված է՝03/08/2021 16:02 (UTC+04:00□

Բյուջետային փոխանցում N 000043

Ամսաթիվ	**03/08/2021**	Նույնացուցիչ	**c0b129eb-821a-4168-adfb-b32bd4dbd1f5**
Հաշիվ	Շահառուի հաշիվ	Գումար	
1150015516686660	**900008000698**	**AMD**	**58,500.00**
Վճարողի անվանում	**ԱՐԽԻ ԹՈՒԼՍ ՍՊԸ**		
Վճարողի բանկ	**«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ**		
ՀՎՀՀ	**04234306**		
Տարածաշրջանի/ՀՏ կոդ	**91**		
Շահառուի անվանում	**Գնումների որակավորման ապահովում՝ կանխիկ փողի ձեւով, ՀՀ ֆիանսների նախարարություն**		
Գումարը բառերով	**Հիսունութ հազար հինգ հարյուր դրամ**		
Նպատակ	**ԵՔ-ԲՄԽԱՇՁԲ-21/19 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ,«ԱՐԽԻ ԹՈՒԼՍ» ՍՊԸ ՀՎՀՀ 04234306**		

Ստորագրող	Edgar Khachatryan
Ստորագրության կարգ	I, II
Ամսաթիվ	03/08/2021 15:53:33.120
Մարքի անվանում	SMS
Մարքի սերիալ N	37477119180
Ստորագրման տվյալ	SMS
Ստորագրություն	35406

Կատարված է □անկի կողմից